ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

(ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 10)

Դիմող՝ **«Միասնության թեւեր» կուսակցություն**

նախագահ Արմեն Էդվարդի Գալստյան

(ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 53ա,

Ծանուցման հասցե՝ ք.Երեւան, Ազատության 9ա, բն. 20)

091303944

093205530

Պատասխանող՝ **ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով**

(ՀՀ, ք.Երեւան, Գևորգ Քոչար 21Ա)

ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների (այսուհետ՝ Ընտրություններ) արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ

Վիճարկվող ակտերը

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԸՀ) 2026 թվականի հունիսի 14-ի N 258-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներ վերաբերյալ» և N 259-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին»

I. Դիմումի ընդունելիությունը

Սույն դիմումը ներկայացվում է ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի, 168-րդ հոդվածի 5-րդ մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական դատարանի մասին օրենք) 77-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 102-րդ հոդվածի հիման վրա:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ ՄՏԻՑ ԹԻՎ 3-71 «19» 06 2026թ.

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը քննում է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վերաբերյալ վեճերը և գնահատում, թե արդյոք ընտրական գործընթացում արձանագրված խախտումները կարող էին ունենալ կամ ունեցել են էական ազդեցություն ընտրությունների արդյունքների վրա:

Դիմողը ընտրություններին մասնակցած կուսակցություն է և ունի Ընտրությունների արդյունքը և վիճարկվող որոշումը բողոքարկելու իրավունք:

II. Փաստական հանգամանքները

2026 թվականի հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվել են Ազգային ժողովի հերթական ընտրություններ:

Ընտրական տեղամասերից ստացված արձանագրությունների և ԿԸՀ-ի հրապարակած նախանական արդյունքների տարբերությունները հաշվի առնելով՝ 2026 թվականի հունիսի 12-ին, չընդունելով քվեարկության արդյունքները, Դիմողը Երևան քաղաքի տասը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ դիմումներ է ներկայացրել բոլոր ընտրատեղամասերի արդյունքները վերահաշվելու համար: Վերահաշվարկի արդյունքում փոփոխվել (ավելացել կամ պակասել) է ընտրություններին մասնակցած մի շարք ուժերի ստացած ձայների քանակը:

2026 թվականի հունիսի 11-ին ԿԸՀ-ն անվավեր է ճանաչել թիվ 12/13, 10/51 և 35/65 ընտրատեղամասերի քվեարկության արդյունքները և արձանագրել, որ արդյունքների անվավեր ճանաչումը չի ազդում ընտրությունների արդյունքի վրա: Անվավեր ճանաչման արդյունքում նվազել են մի շարք քաղաքական ուժերի, այդ թվում՝ Դիմողի ստացած ձայների քանակը՝ 33,664-ից դառնալով 33,537:

2026 թվականի հունիսի 12-ին Դիմողը և «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը դիմումներ են ներկայացրել ԿԸՀ՝ խնդրելով անվավեր ճանաչել Ընտրությունների արդյունքները և նշանակել վերաքվերակություն:

2026 թվականի հունիսի 14-ին ԿԸՀ-ն ընդունեց երկու որոշումներ՝ N 258-Ա որոշումը, որով անդրադարձել է երկու դիմումներին և ընտրության ընթացքում ու քվեարկության օրը տեղի ունեցած խախտումներին և արձանագրել, որ դրանք չեն ազդել ընտրության արդյունքների վրա և N 259-Ա որոշումը, որով արձանագրել է, որ Ազգային ժողովն ընտրվել է և մանդատները բաշխել է հետևյալ կերպ[1].

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 61 մանդատ,
- «Ուժեղ Հայաստան» դաշինք՝ 28 մանդատ,

[1] Ազգային փոքրամասնությունների մանդատները բաշխել է հետևյալ կերպ՝ «Քաղաքացիական պայմանագիր»՝ 3 մանդատ, «Ուժեղ Հայաստան» դաշինք՝ 1 մանդատ:

- «Հայաստան» դաշինք՝ 12 մանդատ:

Միաժամանակ ԿԸՀ-ն արձանագրել է. «Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 7-ի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վերաբերյալ» N 258-Ա որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 95 -րդ հոդվածի 1 -ին մասի 3-րդ, 4 -րդ և 5-րդ կետերով նախատեսված որոշումներն ընդունելու հիմքեր առկա չեն»:

Դիմող կուսակցությունը ԿԸՀ-ին ներկայացրել է ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին հիմնավորված դիմում, որտեղ նկարագրված են բազմաթիվ խախտումներ, որոնք իրենց բնույթով և ծավալով կրել են համակարգային բնույթ և խախտել են ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված ընտրության հավասարության և ազատության սկզբունքները:

III. Ազատ և արդար ընտրությունների սահմանադրական չափանիշները

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին:

ՀՀ Սահմանադրության 48-րդ և 89-րդ հոդվածներից բխում է, որ Ազգային ժողովը պետք է ձևավորվի քաղաքացիների ազատ կամարտահայտության հիման վրա:

Ընտրությունների սահմանադրական լեգիտիմությունը ենթադրում է.

- ընտրողների ազատ կամարտահայտություն,
- քաղաքական ուժերի հավասար մրցակցություն,
- վարչական չեզոքություն,
- քվեների ճշգրիտ հաշվառում,
- հանրային վստահություն ընտրական գործընթացի նկատմամբ:

Ընտրությունների արդյունքները կարող են ճանաչվել անվավեր ոչ միայն այն դեպքում, երբ ապացուցված է յուրաքանչյուր խախտման ճշգրիտ թվային ազդեցությունը, այլ նաև այն դեպքում, երբ խախտումների ամբողջությունը թույլ չի տալիս վստահությամբ հաստատել քաղաքացիների իրական կամարտահայտության արդյունքը:

IV. Վարչական ռեսուրսի համակարգային կիրառումը

Դիմողի կողմից ներկայացված փաստական տվյալները վկայում են վարչական ռեսուրսի համատարած և համակարգային օգտագործման մասին:

Մասնավորապես արձանագրվել են.

- պետական և համայնքային աշխատողների ներգրավում քարոզարշավին,
- կրթական հաստատությունների աշխատակիցների մասնակցություն քաղաքական միջոցառումներին,
- համայնքային կառույցների օգտագործում ընտրական նպատակներով,
- պետական ազդեցության լծակների կիրառմամբ ընտրողների մոբիլիզացիա:

Նման գործողությունները հակասում են ընտրական հավասարության սկզբունքին և խաթարում են քաղաքական մրցակցության արդար բնույթը:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ իշխող քաղաքական ուժի քարոզչական միջոցառումներին ներգրավվել են հանրային և համայնքային ծառայության համակարգի ներկայացուցիչներ, ուսումնական և նախադպրոցական հաստատությունների աշխատակիցներ, ինչպես նաև ենթակա կառույցների ղեկավարներ:

Հատկապես խնդրահարույց է այն հանգամանքը, որ որոշ հրապարակումներում արձանագրվել է իշխող ուժի քարոզարշավին դպրոցների, մանկավարժների և աշակերտների մասնակցության փաստը՝ դասապրոցեսի կամ աշխատանքային ժամերի համատեքստում:[2] Նման երևույթը խախտում է ընտրական գործընթացի հավասարության սկզբունքը, քանի որ պետական և հանրային ենթակառուցվածքները փաստացի օգտագործվում են իշխող քաղաքական ուժի քարոզչական նպատակների համար:

Այս առնչությամբ «Միասնության թևեր» կուսակցությունը 2026 թվականի մայիսի 18-ին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, որի վերաբերյալ մինչ օրս օրենքով սահմանված կարգով որևէ քայլ ձեռնարկված լինելու մասին տեղեկություն չունենք:

Ընտրական գործընթացում վարչական ռեսուրսի չարաշահման մասին հրապարակումները վկայում են, որ պետական և համայնքային համակարգում

---

[2] Տես, օրինակ, Արման Թաթոյանի հրապարակած սույն տեսանյութերը (հասանելի են հետևյալ հասցեներով՝ https://www.facebook.com/share/v/1ETkh3fw5U/?mibextid=wwXIfr, https://www.facebook.com/share/v/18sBDzuoJ9/?mibextid=wwXIfr) (տրամադրվել է էլ. կրիչով):

գործող անձինք ոչ միայն մասնակցել են քարոզչական միջոցառումներին, այլև որոշ դեպքերում հանդես են եկել որպես ընտրողների մոբիլիզացիայի և ուղղորդման օղակներ: Այս իրավիճակում պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձի քաղաքական ներգրավվածությունը չի սահմանափակվել անձնական քաղաքական նախընտրությամբ, այլ վերածվել է պաշտոնեական դիրքի և ենթակայության հարաբերությունների քաղաքական օգտագործման:

Սույն հանգամանքը հատկապես կարևոր է, քանի որ իշխանական քաղաքական ուժը, լինելով պետական կառավարման համակարգի կրողը, օբյեկտիվորեն տիրապետել է այնպիսի վարչական, տեղեկատվական, սոցիալական և կազմակերպական ռեսուրսների, որոնց հասանելիություն չեն ունեցել մյուս քաղաքական ուժերը: Այդ ռեսուրսների ընտրական նպատակներով օգտագործումը հանգեցրել է քաղաքական մրցակցության փաստացի անհավասարության:

Վարչական ռեսուրսի մեկ այլ դրսևորում է այն, որ որոշ տեղական ինքնակառավարման մարմիններ, որտեղ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու անդամները կազմել են մեծամասնություն և ընտրել համայնքի ղեկավար, նախընտրական քարոզարշավի ընթացքում կամ դրան անմիջապես նախորդող ժամանակահատվածում անհատույց գործարքներ են կնքել մի շարք քաղաքացիների հետ կամ տրամադրել փոխադրամիջոցների և անշարժ գույքի հարկի գծով արտոնություններ (տես օրինակ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 30 ապրիլի 2026 թվականի թիվ 84-Ա որոշումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 11 մայիսի 2026 թվականի թիվ 615-Ա որոշումը, նույն համայնքի ղեկավարի 15 մայիսի 2026 թվականի թիվ 648-Ա որոշումը և այլն)[3]: Հատկանշական է, որ այս անձինք մասնակցել են ընտրություններին և բարդ չէ ենթադրել, թե ում օգտին կարող էին քվեարկել:

Նշված արարքները հակասել են Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված վարչական ռեսուրսի օգտագործման արգելքին և նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքներին, ինչը կրել է համատարած բնույթ և էականորեն ազդել քաղաքացիների կամքի ձևավորման վրա:

V. Ընտրողների ազատ կամարտահայտության խախտումը

Դիմողի կողմից ներկայացված նյութերից հետևում է, որ ընտրողների նկատմամբ կիրառվել են.

- ուղղակի և անուղղակի ճնշումներ,

[3] Ամբողջական փաթեթը ներկայացված է սույն դիմումին կից: Յուրաքանչյուր որոշմանը կցված է նաև համապատասխան ընտրատեղամասից ստորագրությունների մատյանի պատճենը և ընդգծված են այն անձի/անձանց անունները, որոնց վերաբերյալ կայացվել է համապատասխան որոշումը:

- վախի մթնոլորտ,
- մասնակցության վերահսկման մեխանիզմներ,
- սոցիալական և աշխատանքային կախվածության գործոններ:

Նման պայմաններում քաղաքացիների ընտրությունը չի կարող դիտվել որպես լիովին ազատ կամարտահայտության արդյունք:

Հրապարակային տեղեկությունների, քաղաքական ուժերի հաղորդումների և ընտրողների կողմից փոխանցված տեղեկությունների համադրումը ցույց է տալիս, որ նախընտրական փուլում և քվեարկության օրը կիրառվել են ընտրողների կամքի վրա ազդելու տարբեր մեխանիզմներ:

Մասնավորապես, արձանագրվել են պնդումներ այն մասին, որ քաղաքացիներին պարտադրել կամ ուղղորդել են մասնակցել իշխող ուժի քարոզչական հավաքներին, չմասնակցել ընդդիմադիր քաղաքական ուժերի հանդիպումներին, ինչպես նաև քվեարկության օրը կատարել իշխանական ուժի օգտին քվեարկության ապացուցման գործողություններ, այդ թվում՝ քվեաթերթիկի լուսանկարման միջոցով: Արմավիր համայնքում Դիմողի քարոզարշավի մասնակիցներին հետագայում կանչել են պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ և հորդորել զերծ մնալ Դիմողի հավաքներին մասնակցելուց:

Մեկ այլ դեպքում Գավառ քաղաքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տեղեկատվական թերթիկներ բաժանողները հեռացրել, գետինին են գցել շենքի մուտքում բնակիչների դռների վրա տեղադրված Դիմողի բուկլետները և փակցրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թերթիկները[4]:

Նման մեխանիզմները, եթե հաստատվում են ներկայացվող ապացույցներով, իրենց բնույթով ուղղված են ոչ միայն առանձին ընտրողների կամքի վրա ազդելուն, այլև ընտրական գործընթացում վախի, կախվածության և վերահսկելիության մթնոլորտ ձևավորելուն: Ընտրողը, որը համոզված է, որ իր քվեարկությունը կարող է վերահսկվել, այլևս չի կարող լիարժեքորեն օգտվել գաղտնի, ազատ և անձնական կամարտահայտության իրավունքից:

Հատկապես ծանրակշիռ է այն հանգամանքը, որ նման պնդումները վերաբերում են ոչ թե մեկ կամ երկու մեկուսացված դեպքի, այլ տարածքային և ոլորտային տարբեր խմբերի: Դրանք պետք է դիտարկվեն ընդհանուր շղթայի մեջ՝ որպես ընտրողի ազատ կամքի վրա ապօրինի ազդեցության համակարգային դրսևորում:

1. Վախի մթնոլորտի ձևավորումը

[4] Տես «Տեսանյութ 11» վերտառությամբ ֆայլը՝ ներկայացված է էլ կրիչով:

Նախընտրական ժամանակահատվածում հանրային դաշտում լայն տարածում են ստացել տեղեկություններ պետական և համայնքային համակարգերում աշխատող քաղաքացիների նկատմամբ գործադրված ուղղակի կամ անուղղակի ճնշումների վերաբերյալ: Հատկապես ընդգծված է եղել սպառնալիքի և վիրավորական խոսքի գործածումը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավարի կողմից ընդհանրապես և արցախցիների նկատմամբ մասնավորապես:

Ընտրական գործընթացի բազմաթիվ մասնակիցներ հանդիումների և հավաքների ժամանակ հայտարարել են, որ քաղաքացիները մտավախություն են ունեցել իրենց քաղաքական նախընտրությունները բացահայտ արտահայտելու կամ ընդդիմադիր քաղաքական ուժերի գործունեությանը մասնակցելու հարցում՝ աշխատանքային, սոցիալական կամ վարչական հնարավոր հետևանքների պատճառով:

Հաճախ, այն դեպքում երբ քաղաքացիները սուր հարցադրումներով են հանդես եկել, դրան ուղղակիորեն հետևել է վիրավորանքը և սպառնալիքը, իսկ որոշ դեպքերում քրեական հետապնդումը: Ամենացցուն օրինակներն են Արթուր Օսիպյանի[5] և Արփինե Սողոյանի վեճը[6] Նիկոլ Փաշինյանի հետ նախընտրական քարոզարշավի ժամանակ: Առաջին դեպքում նախաձեռնվեց քրեական վարույթ[7], իսկ Արփինե Սողոյանի նկատմամբ սկսվեցին ճնշումներ՝ ընդհուպ աշխատանքից դուրս գալու պահանջով[8]:

Առավել ցայտուն է արտահայտվում վախի տարածումը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի այն խոսքում, որ «*Սեպտեմբերին աղետաբեր պատերազմ է լինելու, եթե ԲՊ-ն խորհրդարանում սահմանադրական մեծամասնություն չձևավորի*»[9]:

Թեև նման ազդեցության զգալի մասը կրում է ոչ ֆորմալ բնույթ և դժվար է ամբողջությամբ փաստաթղթավորել, այնուամենայնիվ, դրա լայն տարածվածությունը և բազմաթիվ անկախ աղբյուրներում կրկնվող բնույթը վկայում են ընտրողների ազատ կամքի վրա ազդեցության իրական վտանգի մասին:

---

[5] Տես «Ռադդ քաշի՛, համբալի մեկը». թեժ լեզվակռիվ Փաշինյանի և Արթուր Օսիպյանի միջև, *Factor*, (հասանելի է հետևյալ հասցեով՝ https://factor.am/1019562.html), «Արա՛, ա՛յ ստահակ, բացատրի՝ ինչու չես զոհվել. Փաշինյանը՝ Արթուր Օսիպյանին», *Factor*, (հասանելի է հետևյալ հասցեով՝ https://factor.am/1019549.html):

[6] «Հանելու եմ ձեր մասկաները, կոխեմ համապատասխան տեղը».Փաշինյանը հունից դուրս եկավ եւ սկսեց գոռգոռալ, *News.am* (հասանելի է հետևյալ հասցեով՝ https://news.am/hy/video/1036189):

[7] «Արթուր Օսիպյանը կալանավորվեց», *Ազատություն ռադիոկայան* (հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.azatutyun.am/a/33761562.html):

[8] «Վարչապետի հետ վիճաբանած բժշկուհուն առաջարկել են ազատման դիմում գրել. քաղաքապետն արձագանքել է», *Civlinet*, (հասանելի է հետրյալ հասցեով՝ https://civilnet.am/hy/news/1011900):

[9] «Սեպտեմբերին պատերազմ է լինելու, չի ուշանալու». շանտա՞ժ, թե՞ «քաղաքական առաջարկ», *Ազատություն ռադիոկայան (*հասանելի է հեևյալ հասցեով https://www.azatutyun.am/a/septemberin-paterazm-e-linelou-chi-oushanalou-shanta-zh-te-kaghakakan-arajark/33713491.html)

2. Ընդդիմադիր քաղաքական ուժերի նկատմամբ բացասական ազդեցության նպատակային միջավայրի ձևավորումը

Նախընտրական շրջանում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների նկատմամբ իրականացվել են վարկաբեկման, ճնշման, իրավական հետապնդման կամ այլ սահմանափակող գործողություններ:

Նման միջավայրը ոչ միայն սահմանափակում է քաղաքական ուժերի բնական գործունեությունը, այլև ազդում է ընտրողների ընկալումների վրա՝ ստեղծելով տպավորություն, թե ընդդիմադիր գործունեությունը կարող է առաջացնել անձնական կամ մասնագիտական ռիսկեր:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները և հատկապես կուսակցության պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի գրեթե ամբողջ ընթացքում ընդդիմադիր ուժերի նկատմամբ հանդես է եկել վիրավորանք և որոշ դեպքերում զրպարտություն պարունակող արտահայտություններով՝ այդ կերպ նպատակային տարածելով ատելության խոսույթ ընդդիմադիր գործիչների նկատմամբ[10]:

Ընտրական գործընթացում քաղաքական մրցակցության պայմանները չեն կարող համարվել հավասար, եթե քաղաքացիները ստիպված են իրենց քաղաքական ընտրությունը կատարել վախի, անորոշության կամ հնարավոր հետևանքների ազդեցության պայմաններում:

VI. Սոցիալական և աշխատանքային կախվածության օգտագործումը

Վարչական ռեսուրսի կիրառման առավել վտանգավոր դրսևորումներից է սոցիալական և աշխատանքային կախվածության օգտագործումը: Ըստ հրապարակային հաղորդումների՝ քաղաքացիների նկատմամբ կիրառվել են աշխատանքը կորցնելու, ընտանիքի անդամների զբաղվածության վրա ազդելու, հարկային կամ վարչական ճնշումների ենթարկելու, համայնքային կամ սոցիալական ծառայություններից զրկելու ուղղակի կամ անուղղակի սպառնալիքներ:

Այսպիսի մեխանիզմը հատկապես վտանգավոր է փոքր համայնքներում, որտեղ քաղաքացիների աշխատանքային, սոցիալական և կենցաղային կախվածությունը տեղական իշխանություններից կամ պետական կառույցներից ավելի տեսանելի և անմիջական է: Այդ պայմաններում համայնքապետը, դպրոցի տնօրենը, մանկապարտեզի ղեկավարը, պետական հիմնարկի ղեկավարը կամ այլ վարչական ազդեցություն ունեցող անձը կարող է ընտրողի համար ընկալվել ոչ թե որպես

[10] Տես, ի թիվս այլնի, 5-9-րդ հղումները:

շարքային քաղաքական համակիր, այլ որպես պետական կամ վարչական իշխանության ներկայացուցիչ:

Այս առումով հատկանշական է ընտրությունները նշանակելուց հետո՝ 2026 թ. մարտի 5-ին, ՀՀ կառավարության 244-Ն որոշումը, որով ավելացվեցին կենսաթոշակների չափերը 10,000 ՀՀ դրամով[11]: Հաջորդիվ, սոցիալական և աշխատանքային կախվածության օրինակ են հանրային ծառայողներին տրվող պարգևավճարները (այսպես կոչված պիլոտային պարգևավճարները)[12], որոնք էապես ավելացնում են հանրային ծառայողների վարձատրությունը՝ առանց հստակ երաշխիքների և ստեղծում կախվածություն իշխող ուժից: Այս քայլերը այլ պայմաններում կարող էին իրապես համարվել սոցիալական խնդիրներ լուծող: Սակայն հաշվի առնելով այն պայմանները և ժամանակահատվածը, որի ընթացքում վերը հիշատակված որոշումներն ընդունվել են, այլ բան չի մնու ենթադրել, քան այն որ հիշատակված միջոցները կիրառվել են որպես ընտրություններին ընդառաջ ընտրողների նկատմամբ գործադրվող ոչ իրավաչափ միջոց, որն ուղղակի ազդեցություն է ունեցել նրանց կամքի ձևավորման վրա:

Սոցիալական կախվածության օգտագործումը խաթարում է ընտրական գործընթացի հիմնարար էությունը, քանի որ ընտրողը քվեարկում է ոչ թե իր քաղաքական համոզմունքների, այլ հնարավոր հետևանքներից խուսափելու տրամաբանությամբ: Այս հանգամանքը պետք է գնահատվի որպես ընտրողների ազատ կամարտահայտության վրա ուղղակի և էական ազդեցություն ունեցող գործոն:

VII. Քարոզչական հավասարության սկզբունքի խախտումը

Ընտրական գործընթացի ընթացքում իշխող քաղաքական ուժը փաստացի օգտվել է պետական իշխանության ինստիտուցիոնալ առավելություններից, ինչը հանգեցրել է քաղաքական մրցակցության անհավասար պայմանների ձևավորմանը:

Ընտրական գործընթացի ընթացքում իշխող քաղաքական ուժի համար ձևավորվել են առավել բարենպաստ քարոզչական պայմաններ՝ պայմանավորված պետական իշխանության շարունակական տեղեկատվական ներկայությամբ, պաշտոնական դիրքի ընձեռած հրապարակային ազդեցությամբ, պետական օրակարգի և կուսակցական քարոզչության միջև սահմանների խառնմամբ:

---

[11] Տես «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2026 թ. մարտի 5-ի N 244-Ն որոշումը:

[12] Տես ««Թվերից այս կողմ». Պարգևավճարներ,հաշվարկներ և փակ տվյալներ», *Ազատություն ռադիոկայան*, «3.5 միլիարդ դրամի խրախուսում պետական համակարգին» *Ազատություն ռադիոկայան*, «4.6 միլիարդ դրամ պարգևավճար. փորձագետը սրա մեջ ընտրություններին ընդառաջ ռիսկեր է տեսնում», *Ազատություն ռադիոկայան*, «Մինչև 5 միլիոն դրամ. նոր մանրամասներ՝պարգևավճարների մասին», *Ազատություն ռադիոկայան*:

Քարոզարշավի ընթացքում պետական պաշտոն զբաղեցնող անձինք իրենց պաշտոնական ճանաչելիությունը, պետական կառավարման համակարգին հասանելիությունը և հանրային հաղորդակցության հնարավորությունները օգտագործել են քաղաքական մրցակցության մեջ առավելություն ստանալու համար: Արդյունքում քաղաքացիների համար հաճախ խառնվել են պետական գործունեության, պաշտոնական հաղորդակցության և կուսակցական քարոզչության սահմանները:

Այսպիսի իրավիճակը հակասում է ընտրական հավասարության սկզբունքին, քանի որ ընդդիմադիր քաղաքական ուժերը գործել են միայն իրենց կուսակցական և հանրային ռեսուրսների սահմաններում, մինչդեռ իշխող ուժը փաստացի օգտվել է նաև պետական իշխանության ինստիտուցիոնալ առավելություններից:

Դիմողը նաև ներկայացրել է փաստեր, ըստ որոնց՝ նախընտրական քարոզչության ընթացքում ընտրողներին բաժանվել են ապրանքներ և սննդամթերք: Այսպես, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանը, ինչպես մարզերում այնպես էլ Երևան քաղաքում նախընտրական քարոզարշավի շրջանակում, քաղաքացիներին բաժանել է սննդամթերք և այլ ապրանքներ, մասնավորապես՝ թխվածքաբլիթ, կոնյակ և խմելու ջուր[13] (տեսանյութերը կցվում են): Մինչդեռ 08. 05. 2026 ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ծանուցել էր, որ ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին ՀՀ նախագահի թիվ ՆՀ-21-Ն հրամանագիրն ուժի մեջ է մտել 2026 թվականի փետրվարի 7-ին և իրազեկել էր, որ իրեն վերապահված լիազորությունների և գործիքակազմի ամբողջ ծավալով ընտրական գործընթացի նկատմամբ իրականացնում է մշտադիտարկում և վերահսկողություն՝ հորդորելով զերծ մնալ բարեգործության արգելքը խախտող որևէ անօրինական գործողությունից՝ պարզաբանելով, որ օրենքով սահմանված պահանջների ցանկացած խախտում արժանանալու է համարժեք և խիստ իրավական արձագանքի:

Մեկ այլ օրինակ է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավի ընթացքում «սրտիկներով կապույտ մեքենաների» օգտագործումը[14], որը հակասում է ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշմամբ հաստատված՝ տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրման կանոններին, քանի որ ակնհայտորեն գերազանցում են թույլատրելի չափերը: Այս փաստի առնչությամբ 2026 թվականի մայիսի 13-ին ներկայացվել է դիմում ՀՀ ՆԳՆ Ոստիկանությանը՝ վարչական վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով: Միայն 2026 թվականի հունիսի 6-

[13] Տես «Տեսանյութ 5»-ից «Տեսանյութ 8» ֆայլերը և «Տեսանյութ 10» ֆայլը՝ ներկայացվել է էլ. կրիչով:
[14] Տես «Տեսանյութ 1»-ից «Տեսանյութ 4» ֆայլերը՝ ներկայացվել է էլ. կրիչով:

ին ստացել ենք պատասխան, որ Պարեկային ծառայության կողմից կձեռնարկվեն լիազորություններից բխող գործողություններ[15]:

Նշված արարքները հակասել են ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքին, ինչը կրել է համատարած բնույթ և էականորեն ազդել քաղաքացիների կամքի ձևավորման վրա:

Նախընտրական հիմնադրամի սահմանաչափը փաստացի գերազանցելու վերաբերյալ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հունիսի 10-ին ներկայացրել է նախընտրական հիմնադրամի հայտարարագիրը՝ որպես ծառայությունների և ապրանքների շուկայական արժեքի ընդհանուր չափ հայտարարագրելով 798,800,084 ՀՀ դրամ: Սա Ընտրական օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանված առավելագուն չափից պակաս է ընդամենը 1,199,916 ՀՀ դրամով:

Հայտարարագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում ներառված են թվով 130 անշարժ գույքեր, որոնք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը հանձնվել են անհատույց[16]: Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համաձայն, հիշատակված անշարժ գույքեր պետք է արտացոլված լինեին հայտարարագրում շուկայական արժեքով: Դիմողի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացված արժեքները ոչ միայն չեն համապատասխանում գործող շուկայական արժեքներին այլև հաճախ էականորեն տարբերվում են շուկայական արժեքից: Օրինակ՝ Պռոշյան համայնքում Անդրանիկի 14/9 հասցեում հայտարարգրվել է անշարժ գույք 20,000 ՀՀ դրամ արժեքով, այն դեպքում երբ նույն փողոցում Դիմողը վարձակալել է անշարժ գույք տասն անգամ բարձր գնով[17]: Ընդ որում, այս 130 անշարժ գույքերի անհատույց օգտագործուը նաև բացառել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հարկային պարտավորությունների կատարումը, ինչը չէր բացառվի վարձակալության դեպքում: Վերոգրյալ գների համադրումը ընտրություններին մասնակցած այլ ուժերի հայտարարագրած անշարժ գույքերի վարձակալության կամ շուկայական արժեքների հետ ցույց է տալիս, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացրած տվյալները չեն համապատասխանում իրական շուկայական արժեքներին:

Այս հանգամանքով պայմանավորված Դիմողը 2026 թվականի հունիսի 14-ին ԿԸՀ-ում տեղի ունեցած վարույթի շրջանակում միջնորդել է նշանակել

[15] Տես ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պարեկային ծառայության պետի 09. 06. 2026 թվականի գրությունը:
[16] Տես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման հայտարարագիրը, 1-12 էջեր:
[17] Տես «Միասնության թևեր» կուսակցության պայմանագիրը Պռոշյան բնակավայրում անշարժ գույք վարձակալելու մասին (17.04.2026թ.):

փորձաքննություն վերը նշված 130 անշարժ գույքերի իրական շուկայական արժեքը պարզելու նպատակով[18]: Միջնորդությունը անհիմն մերժվել է: Իսկ երբ Դիմողի ներկայացուցիչը միջնորդել է հետաձգել նիստը և ժամանակ տրամադրել, որ իրենք ներկայացնեն մասնագետի կամ փորձագետի եզրակացություն, ԿԸՀ-ն այն ընդհանրապես չի քննել[19]:

Մեկ այլ կարևոր հանգամանք է այն, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հայտարարագրում ներառված չէ որևէ աշխատակցի աշխատանքային պայմանագիր կամ ծառայությունների մատուցման պայմանագիր: Անգամ եթե այդ աշխատանքները կատարվել են անհատույց, ապա Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներին համապատասխան պետք է ներառված լինեին հայտարարագրում իրենց շուկայական արժեքով:

Համացանցով, լրատվականներով տարածված բազմաթիվ տեսանյութերում երևում են անձինք ովքեր մասնակցում են քարոզարշավին տարբեր գործառույթներ իրականացնելով: Անգամ եթե մի պահ ընդունենք, որ չեն եղել նման աշխատանքներ կատարող անձինք, ինչն ակնհայտորեն այդպես չէ, ապա հարց է առաջանում, արդյոք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ընդհանրապես ունեցե՞լ է որևէ աշխատակից, օրինակ՝ գործավար, վարորդ, հաշվապահ և այլն: Հատկանշական է, որ Դիմողը իր հայտարարագրում ներառել է շուրջ 260 աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրեր և դրանք ներկայացրել ԿԸՀ:

Ինչու՞ են կարևոր այս տեղեկությունների ներկայացումը ԿԸՀ-ին: Ինչպես վերը նշվեց, նախընտրական հիմնադրամի չափը սահմանափակված է օրենքով՝ 800,000,000 ՀՀ դրամ: Այս սահմանաչափի գերազանցումը կամ նախընտրական հիմնադրամում ստացված ծառայությունների և աշխատանքների չներառումը առաջացնում է իրավական հետևանքներ, ընդհուպ մինչև ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցման անվավեր ճանաչում (Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-ից 5-րդ կետերը): Մինչդեռ վերը նշված անշարժ գույքերի իրական շուկայական արժեքների և աշխատակիցների ծախսերի ներառումը, աշխատակիցների վարձատրությունից առաջ եկող հարկային պարտավորություններին ներառումը նախընտրական հիմնադրամում էականորեն գերազանցելու էր նախընտրական հիմնադրամի շեմը: Սա նշանակում է, որ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հավասարությամբ հանդես չի եկել նախընտրական քարոզարշավի ժամանակ և գտնվել է մրցակցությունից դուրս:

---

[18] Տես 1-ին տեսանյութի 1:54:39-ից (ԿԸՀ՝ հունիսի 14-ի բոլոր նիստերի տեսաձայնագրությունները տեղադրված են ԿԸՀ կայքում՝ նշված հասցեով https://www.elections.am/CEC/Session):

[19] Տես, նույն տեղում, 2-րդ տեսանյութը, 23:50-ից :

Այս հանգամանքները պահանջում էին իրավասու մարմինների լիարժեք քննություն, որը չի իրականացվել, իսկ դրանց մասին Դիմողի ներկայացված փաստարկները չեն գնահատվել ԿԸՀ-ի կողմից:

VIII. Արձանագրությունների և պաշտոնական արդյունքների անհամապատասխանությունները

Դիմողը ներկայացրել է մի շարք ընտրատեղամասեր, որտեղ տեղամասային արձանագրություններով և ԿԸՀ ամփոփ տվյալներով արձանագրվել են էական տարբերություններ[20]:

Այսպես՝ թիվ 34/63 ընտրական տեղամասի առնչությամբ առկա են երկու տարբեր արձանագրություններ, որոնցից մեկում «Միասնության Թևեր» կուսակցության օգտին արձանագրված է 20 քվե, իսկ մյուսում՝ 9 քվե: Արդյունքների ամփոփման ժամանակ հիմք է ընդունվել 9 քվեն:

Թիվ 6/9 ընտրական տեղամասում կուսակցության քվեները արձանագրությամբ կազմել են 34, մինչդեռ արդյունքների ամփոփման տվյալներում արտացոլվել է 23 քվե:

Թիվ 22/10 ընտրական տեղամասում արձանագրության մեջ նշված է 32 քվե, մինչդեռ ամփոփման տվյալներում արտացոլվել է ընդամենը 5 քվե:

Թիվ 6/19 ընտրական տեղամասում արձանագրությամբ կուսակցությանը վերագրված է 30 քվե, մինչդեռ ամփոփման տվյալներում արտացոլվել է 19 քվե:

Այս տարբերությունները վերաբերում են անմիջապես կուսակցություններին տրված քվեների թվին, այլ ոչ թե տեխնիկական տվյալների: Նման անհամապատասխանությունները, նույնիսկ եթե առանձին վերցված թվային առումով կարող են թվալ սահմանափակ, իրավական տեսանկյունից ունեն էական նշանակություն: Դրանք ցույց են տալիս, որ քվեարկության արդյունքների փոխանցման, ամփոփման կամ հաստատման շղթայում առկա են եղել այնպիսի խախտումներ, որոնք ուղղակիորեն վերաբերել են ընտրողի քվեի ճշգրիտ հաշվառմանը:

Ընտրողի քվեն կարող է կորցնել իր իրավական արժեքը ոչ միայն այն դեպքում, երբ ընտրողին ճնշում են կամ կաշառում, այլև այն դեպքում, երբ նրա տրված քվեն արձանագրությունից մինչև վերջնական ամփոփում ընկած ճանապարհին սխալ է հաշվառվում, նվազեցվում կամ այլ կերպ չի արտացոլվում պաշտոնական արդյունքներում:

[20] Տես թիվ 34/63, 6/9, 22/10, 6/19 տեղամասերի արձանագրությունները:

IX. Թիվ 12/13, 10/51 և 35/65 ընտրատեղամասերի արդյունքների անվավեր ճանաչումը և դրա հետևանքները

Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:

Վերոնշյալ դրույթից հետևում է, որ ապացուցման ենթակա չէ այն փաստը, թե արդյոք խախտումները փաստացի ազդել են ընտրությունների արդյունքների վրա: Օրենսդրի պահանջը հստակ է. պետք է ապացուցել, որ խախտումները «կարող էին ազդել»:

«Կարող էին ազդել» ձևակերպումը ենթադրում է հավանականության առկայություն և առավել ցածր շեմ: Մինչդեռ փաստացի ազդելու հանգամանքը, ենթադրում է առավել բարձր շեմ և թվաբանական հաշվարկ՝ պարզելու ազդեցության գոյությունն ու դրա աստիճանը: Օրենսդրի ձևակերպումից չի բխում, որ ամեն դեպքում պետք է ապացուցել, որ արդյունքը կփոխվեր: Ինչպես վերը նշվեց բավարար էր պետք է ցույց տալ, որ առկա է հավանականություն ունենալու այլ արդյունք քան այն ինչ եղել է[21]:

Հետևաբար ԿԸՀ-ն պետք է պարզեր, թե արդյոք վերը նշված երեք ընտրատեղամասերում ընտրողների կամքը օրենքով սահմանված կարգով արտահայտվելու դեպքում կարող էր փոխվել ընտրությունների իրական արդյունքը, այն է՝ ընտրական շեմի հաղթահարում, խորհրդարանում ուժերի ներկայացվածություն և դրանց հարաբերակցություն: Անգամ մեկ մանդատի հաշվարկով փոփոխությունը ազդեցություն է ընտրության արդյունքների վրա:

Երեք ընտրատեղամասերում ձայների ընդհանուր գումարը շուրջ 3,500 էր: Իսկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը պակասում էր 156 ձայն ընտրական շեմը հաղթահարելու համար: Արդյունքում կարող էր փոխվել ԱԺ-ում ուժերի ներակայացվածությունը և մանդատների քանակը: Ընդ որում խախտումները «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին չէին: Հետևաբար խախտումները կարող էին ազդեցություն ունենալ ընտրության արդյունքների վրա:

---

[21] Այս մասին տես նաև Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում լավ փորձի կանոնագրքի» 3.3 (e) կետ (CDL-AD(2002)023rev2-cor), (հասանելի է հետևյալ հասցեով https://www.coe.int/en/web/venice-commission/-/code-of-good-practice-in-electoral-matters-guidelines-and-explanatory-report-adopted-by-the-venice-commission-at-its-51st-and-52nd-sessions-venice-5-6-july-and-18-19-october-2002-4-1):

Հաջորդիվ ԿԸՀ-ն իր N 258-Ա որոշմամբ արձանագրել է, որ երեք ընտրատեղամասերում ընտրության արդյունքների անվավեր ճանաչումը չի ազդում ընտրության արդյունքների վրա: Մեկ բան ակնհայտ է, որ այդ եզրահանգմանը ԿԸՀ-ն եկել է առանց բավարար չափով վերլուծություն անելու և անվավերության ազդեցության չափը գնահատելու: Հաջորդիվ, ԿԸՀ նախագահը հանդես եկավ հայտարարությամբ, որով արձանագրեց. «Հավասար ընտրական իրավունքի տեսանկյունից ևս խնդիրը ակնհայտ է: Վերաքվեարկությունը կարող է խախտել ընտրողների հավասարությունը, քանի որ ընտրողների մեկ խումբը հայտնվում է մյուսներից էապես տարբեր ելակետային պայմաններում»[22]: Նման հետևությունը, ոչ այլ ինչ է քան օրենքի կամայական մեկնաբանում, քանի որ վերաքվեարկության միջոցով արդյունքները շտկելու անհնարինության դեպքում, ԿԸՀ-ն չուներ հայեցողություն և չէր կարող ընդունել այլ որոշում քան ԱԺ ընտրություններն անվավեր ճանաչելու և ԱԺ ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին:

X. Ընտրական բողոքների արդյունավետ քննությունը որպես սահմանադրական պահանջ

ՍԴՈ-412 որոշմամբ[23] Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ ընտրական հանձնաժողովներին ներկայացվող բողոքների քննարկման հստակ կարգի բացակայությունը կարող է հանգեցնել սուբյեկտիվ մեկնաբանությունների և կողմնակալ մոտեցումների, և ընդգծել է բողոքների ընդունման, գրանցման և քննության հստակ ընթացակարգերի անհրաժեշտությունը:

Սույն գործով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստացի չի իրականացրել դիմողի կողմից ներկայացված վարչական ռեսուրսի կիրառման, նախընտրական հինադրամի չափը գերազանցված լինելու, ընտրողների կամարտահայտության վրա ազդեցության, ընտրակաշառքի հատկանիշներ պարունակող գործողությունների և արձանագրությունների անհամապատասխանությունների վերաբերյալ փաստարկների ամբողջական քննություն, ինչը հակասում է ՍԴՈ-412 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը:

Ավելին, ԿԸՀ-ն, հակասելով Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասին, առանձին որոշում է կայացրել՝ N 258-Ա որոշումը, որով անդրադարձել է Դիմողի ներկայացրած դիմումին: Մինչդեռ նման որոշում ընդունելու լիազորություն ԿԸՀ-ն ոչ Ընտրական օրենսգրքով, ոչ էլ որևէ այլ օրենքով չի ունեցել, քանի որ Ընտրական օրենսգրքի 75-րդ և 95-րդ հոդվածների ուժով միակ որոշումը, որը ԿԸՀ-ն կայացնում

---

[22] Տես ԿԸՀ նախագահի 2026 թվականի հունիսի 15-ի հայտարարությունը (հասանելի է հետևյալ հղմամբ https://elections.am/News/Item/2025):

[23] Տես Հայաստանի Հանրապետության նախագահի 2003 թվականի մարտի 5-ի ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով ՍԴՈ-402 որոշումը, 16. 04. 2003 (հասանելի է հետևյալ հասցեով https://concourt.am/decision/decisions/sdv-412.htm)

է ընտրությունների ամփոփման փուլում նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հինգ որոշումներից մեկն է: Հենց այդպես է հաստատված եղել նաև նիստի օրակարգը, որում ներառված է եղել մեկ հարց[24]: Տվյալ դեպքում ԿԸՀ-ն N 259-Ա որոշումն ընդունելիս հղում է կատարել Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածին և բաշխել է մանդատները: Հենց այս՝ N 259-Ա որոշմամբ ԿԸՀ-ն պետք է անդրադառնար Դիմողի դիմումին, ինչը չի արել: Իրավական հետևանքի առումով, սա նշանակում է, որ ԿԸՀ-ն որոշում չի կայացրել մեր դիմումի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով և դուրս է եկել իր լիազորություններից: Ընտրական օրենսգիրքը չի պարունակում գեթ մեկ դրույթ, որով ԿԸՀ-ն ունենա լիազորություն ընդունելու որոշում «ընտրության արդյունքների վերաբերյալ» և եզրափակիչ մասում արձանագրի, որ նախընտրական փուլում և քվեարկության օրը տեղի ունեցած խախտումները չեն ազդում ընտրությունների արդյունքների վրա: Այս եզրահանգումները և վերլուծությունը պետք է արվեր Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի հիման վրա ընդունված N 259-Ա որոշմամբ, ինչը չի արվել:

XI. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի չափանիշները

Ազատ և արդար ընտրությունների իրավունքը պաշտպանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Առաջին արձանագրության 3-րդ հոդվածով, համաձայն որի՝ պայմանավորվող պետությունները պարտավորվում են ողջամիտ պարբերականությամբ անցկացնել ազատ ընտրություններ՝ գաղտնի քվեարկությամբ և այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են ժողովրդի ազատ կամարտահայտությունը օրենսդիր մարմնի ընտրության հարցում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ Առաջին արձանագրության 3-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն ընտրելու և ընտրվելու իրավունքը, այլև ընտրական գործընթացի ամբողջականությունը, ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը և ընտրողի կամքի ազատ արտահայտումը:

ՄԻԵԴ-ը *Namat Aliyev v. Azerbaijan*[25] գործով (գանգատ թիվ 18705/06) նշել է, որ ընտրական խախտումների վերաբերյալ բողոքների արդյունավետ քննության բացակայությունը և ընտրական մարմինների կողմից դրանց ձևական ուսումնասիրությունը կարող են հանգեցնել Առաջին արձանագրության 3-րդ հոդվածի խախտման: Դատարանը մասնավորապես ընդգծել է, որ ընտրական բողոքների քննությունը պետք է լինի իրական, մանրակրկիտ և արդյունավետ (տե՛ս §§ 81–90, 95–98, 104–106):

---

[24] Տես ԿԸՀ՝ 2026 թվականի հունիսի 14-ի նիստի օրակարգը:
[25] Հասանելի է հետևյալ հղումով https://hudoc.echr.coe.int/?i=001-98187 .

Kerimova v. Azerbaijan[26] գործով (գանգատ թիվ 20799/06) ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ ընտրական մարմինները պարտավոր են ապահովել ընտրական վեճերի իրական և արդյունավետ քննություն, իսկ ընտրությունների արդյունքների վրա ազդող հնարավոր խախտումների անտեսումը հակասում է Կոնվենցիայի պահանջներին: Դատարանը նշել է, որ ընտրական բողոքների մակերեսային կամ ձևական քննությունը չի համապատասխանում ազատ ընտրությունների իրավունքի պաշտպանության պահանջներին (տե՛ս §§ 44–52, 54–60):

Davydov and Others v. Russia[27] գործով (գանգատ թիվ 75947/11) ՄԻԵԴ-ը նշել է, որ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից է, իսկ զանգվածային և համակարգային խախտումները կարող են կասկածի տակ դնել ընտրությունների լեգիտիմությունը նույնիսկ այն դեպքերում, երբ յուրաքանչյուր առանձին խախտման ճշգրիտ թվային ազդեցությունը հնարավոր չէ ամբողջությամբ հաշվարկել: Դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել ընտրական գործընթացի ամբողջականության պահպանման անհրաժեշտությանը և ընտրությունների արդյունքների արժանահավատության հարցին (տե՛ս §§ 286–288, 333–337, 340–342):

ՄԻԵԴ-ը *Mugemangango v. Belgium* [GC][28] գործով (գանգատ թիվ 310/15) ընդգծել է, որ ընտրությունների արդյունքների վիճարկման ընթացակարգը պետք է ապահովի արդյունավետ և բավարար դատական վերահսկողություն, իսկ ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունեցող խախտումները պետք է ենթարկվեն խորը և իրական քննության: Մեծ պալատը նշել է, որ ընտրական վեճերի քննության ընթացակարգերը պետք է ապահովեն բավարար երաշխիքներ կամայականությունից պաշտպանվելու համար և ներշնչեն հանրային վստահություն (տե՛ս §§ 68–73, 94–110, 137–145):

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում լավ փորձի կանոնագրքի» (Code of Good Practice in Electoral Matters, CDL-AD(2002)023rev2-cor) համաձայն՝

- ընտրական մարմինները պետք է լինեն անկախ և անաչառ,
- վարչական իշխանությունները պարտավոր են պահպանել քաղաքական չեզոքություն,
- պետական ռեսուրսները չպետք է օգտագործվեն որևէ քաղաքական ուժի օգտին,
- ընտրական մրցակցությունը պետք է իրականացվի հավասար պայմաններում,

[26] Հասանելի է հետևյալ հղումով https://hudoc.echr.coe.int/?i=001-100661.
[27] Հասանելի է հետևյալ հղումով https://hudoc.echr.coe.int/?i=001-173805.
[28] Հասանելի է հետևյալ հղումով https://hudoc.echr.coe.int/?i=001-203885.

• ընտրական բողոքների քննությունը պետք է լինի արդյունավետ և ապահովի խախտումների ամբողջական վերացում:

Նույն փաստաթղթի I.2.3 բաժնի համաձայն՝ հնարավորությունների հավասարության սկզբունքը պահանջում է պետական իշխանությունների չեզոքություն հատկապես՝

ա) ընտրարշավի ընթացքում,

բ) զանգվածային լրատվամիջոցների օգտագործման հարցում,

գ) պետական միջոցների և հանրային ռեսուրսների կիրառման հարցում:

Վենետիկի հանձնաժողովը նաև նշել է, որ վարչական ռեսուրսի օգտագործումը հանդիսանում է ազատ ընտրությունների հիմնական սպառնալիքներից մեկը և կարող է հանգեցնել ընտրությունների արդյունքների արժանահավատության կորստի:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրական չափանիշների համաձայն՝ ընտրությունները պետք է գնահատվեն ոչ միայն առանձին խախտումների, այլև դրանց կուտակային ազդեցության տեսանկյունից: Եթե բազմաթիվ խախտումներ միասին հանգեցնում են ընտրական գործընթացի նկատմամբ վստահության կորստի կամ ընտրողի կամքի հավաստի արտահայտման անհնարինության, ապա ընտրությունների արդյունքները չեն կարող համարվել ժողովրդավարական չափանիշներին համապատասխան:

Սույն գործով ներկայացված փաստական տվյալները՝ վարչական ռեսուրսի համակարգային կիրառումը, ընտրողների ազատ կամարտահայտության վրա ազդեցությունը, քաղաքական մրցակցության անհավասար պայմանները, տեղամասային արձանագրությունների և պաշտոնական արդյունքների միջև արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից դրանց արդյունավետ քննության բացակայությունը, պետք է գնահատվեն վերոհիշյալ միջազգային չափանիշների լույսի ներքո:

Դրանց համակցված գնահատումը հիմք է տալիս եզրակացնելու, որ առկա է առնվազն հիմնավոր կասկած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների պաշտոնական արդյունքների համապատասխանության վերաբերյալ ընտրողների իրական կամարտահայտությանը, ինչը հակասում է Եվրոպական կոնվենցիայի Առաջին արձանագրության 3-րդ հոդվածին, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին և Վենետիկի հանձնաժողովի կողմից ձևավորված եվրոպական ընտրական չափանիշներին:

XII. Խախտումների ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա

Դիմողի կողմից ներկայացված փաստարկների համաձայն՝ արձանագրված խախտումները կարող էին ազդել.

- ընտրական շեմերի հաղթահարման վրա,
- քաղաքական ուժերի խորհրդարանական ներկայացվածության վրա,
- խորհրդարանական մեծամասնության ձևավորման վրա:

Դիմողը հիմնավոր կերպով նշել է, որ արձանագրված խախտումները պետք է գնահատվեն ոչ թե առանձին, այլ դրանց ամբողջության մեջ:

XIII. ԿԸՀ-ի կողմից արդյունավետ քննության բացակայությունը

ԿԸՀ-ն սահմանափակվել է միայն ընտրությունների արդյունքների ամփոփմամբ և փաստացի չի իրականացրել ներկայացված խախտումների ամբողջական և արդյունավետ քննություն:

Վիճարկվող որոշման մեջ բացակայում են.

- վարչական ռեսուրսի կիրառման գնահատականը,
- արձանագրությունների անհամապատասխանությունների գնահատականը,
- ընտրողների ազատ կամարտահայտության խախտումների գնահատականը,
- խախտումների կուտակային ազդեցության վերլուծությունը:

Փոխարենը ԿԸՀ-ն ընդամենը հայտարարել է, որ տեղի չեն ունեցել այնպիսի խախտումները, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա անվավեր ճանաչելու հիմքեր չկան (N 258-Ն որոշում) և բաշխել է մանդատները (N 259-Ն որոշում):

Եզրահանգում

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ, 7-րդ, 168-րդ և 169-րդ հոդվածները, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածը, Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած չափանիշները և Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ Սահմանադրական դատարանը լիազորված է գնահատել ընտրական գործընթացի ամբողջականությունը և այն դեպքում, երբ ընտրությունների արդյունքների համապատասխանությունը ժողովրդի իրական կամարտահայտությանը գտնվում է հիմնավոր կասկածի ներքո, անվավեր ճանաչել ԿԸՀ 2026 թվականի հունիսի 14-ի թիվ N 258-Ա և N 259-Ա որոշումները, անվավեր

ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները և վերականգնել սահմանադրական օրինականությունը:

Ելնելով վերոգրյալից՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

1. Սույն դիմումն ընդունել վարույթ:
2. Անվավեր ճանաչել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի N 258-Ա և N 259-Ա որոշումները:
3. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքները:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/հ	Ապացույցի նկարագրություն
1	ԿԸՀ 2026 թվականի հունիսի 14-ի նիստի օրակարգը
2	ԿԸՀ թիվ 258-Ա որոշումը
3	ԿԸՀ թիվ 259-Ա որոշումը
4	6/9, 6/19,22/10, 34/63 (երկու տարբեր օրինակ) ընտրատեղամասերի արձանագրություններ
5	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման հայտարարագիրը
6	«Միասնության թևեր» կուսակցության պայմանագիրը Պռոշյան բնակավայրում անշարժ գույք վարձակալելու մասին (17.04.2026թ.)
7	ԿԸՀ նախագահի 2026 թվականի հունիսի 15-ի հայտարարությունը
8	Հայաստանի Հանրապետության նախագահի 2003 թվականի մարտի 5-ի ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով ՍԴՈ-402 որոշումը, 16. 04. 2003 թ.
9	«Ռադդ քաշի՛, համբալի մեկը». թեժ լեզվակռիվ Փաշինյանի և Արթուր Օսիպյանի միջև, *Factor*
10	«Արա՛, ա՛յ ստահակ, բացատրի՝ ինչու չես զոհվել. Փաշինյանը՝ Արթուր Օսիպյանին», *Factor*
11	«Հանելու եմ ձեր մասկաները, կոխեմ համապատասխան տեղը».Փաշինյանը հունից դուրս եկավ եւ սկսեց գոռգոռալ, *News.am*
12	«Արթուր Օսիպյանը կալանավորվեց», *Ազատություն ռադիոկայան*
13	«Վարչապետի հետ վիճաբանած բժշկուհուն առաջարկել են ազատման դիմում գրել. քաղաքապետն արձագանքել է», *Civlinet*
14	«Սեպտեմբերին պատերազմ է լինելու, չի ուշանալու». շանտա՞ժ, թե՞ «քաղաքական առաջարկ», *Ազատություն ռադիոկայան*
15	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն

	որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2026 թ. մարտի 5-ի N 244-Ն որոշումը
16	««Թվերից այս կողմ». Պարգևավճարներ,հաշվարկներ և փակ տվյալներ», *Ազատություն ռադիոկայան*
17	«3.5 միլիարդ դրամի խրախուսում պետական համակարգին» *Ազատություն ռադիոկայան*
18	«4.6 միլիարդ դրամ պարգևավճար. փորձագետըսրա մեջ ընտրություններին ընդառաջ ռիսկեր է տեսնում», *Ազատություն ռադիոկայան*
19	«Մինչև 5 միլիոն դրամ. նոր մանրամասներ՝պարգևավճարների մասին», *Ազատություն ռադիոկայան*
20	ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պարեկային ծառայության պետի 09. 06. 2026 թվականի գրությունը
21	Պռոշյան բնակավայրում անշարժ գույքի վարձակալության օրինակների քաղվածք
22	«Միասնության թևեր» կուսակցության դիմումը ԿԸՀ-ին՝ ԱԺ ընտրություններն անվավեր ճանաչելու և վերաքվեարկություն նշանակելու մասին:
23	«Միասնության թևեր» կուսակցության՝ Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը
24	«Միասնության թևեր» կուսակցության նախագահ Արմեն Գալստյանի անձնագրի պատճենը
25	Մեկ էլ.կրիչ՝ թվով 11 տեսանյութ և մեկ ֆայլ:

Դիմող՝

«Միասնության Թևեր» կուսակցություն

Նախագահ՝ Արմեն Գալստյան